ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1550 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3.1-ին մասի և 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի կանոնադրությունը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կանոնադրությունը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կանոնադրությունը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կանոնադրությունը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կանոնադրությունը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի կանոնադրությունը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կանոնադրությունը՝ համաձայն N 9 հավելվածի.

10) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի կանոնադրությունը՝ համաձայն N 10 հավելվածի:

2. Մարզպետների աշխատակազմերի կառուցվածքում՝

1) Քաղաքաշինության վարչությունը և Հողաշինության-հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչությունը միաձուլել՝ ստեղծելով քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն.

2) Առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը և Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը միաձուլել՝ ստեղծելով առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն.

3) Քարտուղարությունը, Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը և Անձնակազմի կառավարման բաժինը միաձուլել՝ ստեղծելով անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն, իսկ Սյունիքի մարզպետարանի Քարտուղարությունը և Անձնակազմի կառավարման բաժինը միաձուլել՝ ստեղծելով անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն.

4) Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությունն անվանափոխել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն.

5) Գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունն անվանափոխել գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն.

6) Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունն անվանափոխել ֆինանսական վարչություն.

7) Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժինն անվանափոխել զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին, իսկ Սյունիքի մարզպետարանի Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժինն անվանափոխել զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին:

3. Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո օրենքով սահմանված կարգով և մեկամսյա ժամկետում ապահովել «մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը հաշվառումից հանելու և «մարզպետի աշխատակազմ» մարմինը հաշվառելու գործընթացը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից երկու ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ